

ցրել, այժմ ունի ս. Էջմիածին և Հայրապետական Աթոռ, պէտք է ամուր պահենք ու պահպանենք, որովհետև ներկայ պայմաններում առանց ս. Էջմիածնի ու Հայրապետութեան հայ ազգը իր դոյութիւնը չի կարող պահել և ապրել:

Էջմիածնում հայ տպագրութեան 400-ամեակի և հայ տառերի գիւտի 1500-ամեակի տօնակատարութիւնը կրում էր հանդիսաւոր բնոյթ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Վ-ը, միաբանները և պատգամաւորները շարաթօրը, հոկտեմբերի 13-ին, զնային Ոչապան, ուր և գըտնուում է ս. Մեսրոպի գերեզմանը:

Հանդիսաւոր պատարագից յետոյ 3000-ից աւելի ժողովուրդի ներկայութեամբ բացօդեայ կատարուեց տօնահանդէսը:

Կաթողիկոս Գէորգ Վ բացուած համարելով համազգային մեծ տօնի յօրելեանը՝ բացատրեց Մեսրոպի գիւտի ունեցած ազդեցութիւնը հայերի կուլտուրական զարգացման վրայ:

Ճառեր խօսեցին Կանայեան, Այ. Քալանթար, Թորոսեան:

Օշականցիների կողմից հանդիսականները հիւրասիրուեցին նախաճաշով: Կենացներ առջարկուեցին Հ. Առաքելեանի, Լ. Շահազիզի, Կարապետ եպիսկոպոսի, Մարտոտեան վարդապետի, Ստ. Մալխասեանցի, Մանգալունի բահանայի և Ալխատեան արքեպիսկոպոսի կողմից:

Կիրակի, հոկտեմբերի 14-ին, Էջմիածնում կատարուեց հանդիսաւոր հոգեհանգիստ գրի և տպագրութեան հանգուցեայ վաստակաւորների յիշատակին: Իսկ այդ օրը երեկոյեան Գէորգեան ձեմարանում տեղի ունեցաւ գրական երեկոյթ Կաթողիկոսի ներկայութեամբ: Երեկոյթից յետոյ տրուեց ընթրիք:

Ստացուած են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ գանազան բաղարներից և հիւնարկութիւններից:

Գպրոցական ֆօնդի օգտին Էջմիածինը նուիրարեցել է 15,000 բուրջի:

Ռուսաստանի բոլոր հայաբնակ տեղերից—բաղարներից, գիւղաբաղարներից և նոյն գիւղից բազմաթիւ թղթակցութիւններ, նամակներ և տեղեկութիւններ են ստացուել, որոնցով յայտնուում են համազգային մեծ յօրելեանի փառաւոր կատարումը իրենց շրջաններում եկեղեցական և գպրոցական հանդէսներով:

Բոլոր ծնունդների մէջ սակայն ամենատուեղծայինը և հրաշալի մտքի ծնունդն է: Բանականութեան հզօր օյժը դարերից ի վեր անվերջ նուաճումներ է արել և մեր ժամանակում այդ նուաճումների թիւը կրկնապատուել է այն աստիճան, որ միտքը այժմ յաղթական գնացք ունի և նրա առաջը կարծես թէ ոչ մի ոյժ չի կարող առնել: Ուժգին թափով է զորում նա, նրա ստեղծագործութիւնները մի մի գրաւութիւններ են և հազարաւորներ են հիանում այդ անհասկանալի ոյժի փառաւոր յաղթութիւններով և էլ աւելի թուով անձինք են օգաւում, բարձրանում նրա նուաճումներից:

**ՄՏՔԻ ԾՆՈՒՆԵԼ**

(Գրերի գիւտի 1500-ամեակի առթիւ)

Բնութեան բոլոր ոյժերն էլ այժմ մտքի թագաւորութեան հղատակում են մեծ կամ փոքր չափով և նիւթը իբր այդպիսին, կարծես տկարանում, թուլանում է մտքի ոյժի առաջ: Մաքի ոյժի և նիւթի ոյժի յարաբերութիւնը այժմ գլխավայր է դարձել, մինչդեռ նախապատմական շրջանում նիւթն էր իր օրէնքներով հրամանազրում մտքին և տկար միտքը սարսափում ու միայն հիանում էր բնութեան հզօր երևոյթների առաջ մինչ այն աստիճան, որ նոյնիսկ երկրպագում և աստուածացնում էր այդ երևոյթները, այժմ միտքն է իր օրէնքներով հրամաններ արձակում նիւթին և նրա զաղանիքները մէկիկ-մէկիկ բանում, պարզում: Հէնց այս վերջին հանգամանքն էլ պատճառ է դառնում նիւթի տկարանալուն, որովհետև, երբ զաղանիքը յայտնի է, հակառակորդի ոյժը նշանակում է թուլացել է:

Հին աշխարհի, աւելի ճիշտն ասած՝ նախազոյն կուլտուրայի մէջ գերիշխող տարրը նիւթին էր պատկանում: Նիւթի ոյժերն էին, որ ստեղծում էին և՛ կրօն, և՛ բարոյականութիւն, և՛ կանոնաւորում էին մարդկանց յարաբերութիւնները: Այժմ հոգու—մտքի աշխարհի ոյժերն են գերակալ ոյժերը և եթէ ոչ ըստ ամենայնի մեր ժամանակի մարդկութիւնը համակերպել է այդ ոյժի օրէնքներին, դոնէ աշխատում, ձգտում է համակերպել նրանց: Զգտումը այժմ զէպի մաքի աշխարհի, հոգու աշխարհի աղնուայումն, ընդլայնումն է: մի աշխարհի,

Բնութեան բոլոր ոյժերն էլ այժմ մտքի թագաւորութեան հղատակում են մեծ կամ փոքր չափով և նիւթը իբր այդպիսին, կարծես տկարանում, թուլանում է մտքի ոյժի առաջ: Մաքի ոյժի և նիւթի ոյժի յարաբերութիւնը այժմ գլխավայր է դարձել, մինչդեռ նախապատմական շրջանում նիւթն էր իր օրէնքներով հրամանազրում մտքին և տկար միտքը սարսափում ու միայն հիանում էր բնութեան հզօր երևոյթների առաջ մինչ այն աստիճան, որ նոյնիսկ երկրպագում և աստուածացնում էր այդ երևոյթները, այժմ միտքն է իր օրէնքներով հրամաններ արձակում նիւթին և նրա զաղանիքները մէկիկ-մէկիկ բանում, պարզում: Հէնց այս վերջին հանգամանքն էլ պատճառ է դառնում նիւթի տկարանալուն, որովհետև, երբ զաղանիքը յայտնի է, հակառակորդի ոյժը նշանակում է թուլացել է:

Հին աշխարհի, աւելի ճիշտն ասած՝ նախազոյն կուլտուրայի մէջ գերիշխող տարրը նիւթին էր պատկանում: Նիւթի ոյժերն էին, որ ստեղծում էին և՛ կրօն, և՛ բարոյականութիւն, և՛ կանոնաւորում էին մարդկանց յարաբերութիւնները: Այժմ հոգու—մտքի աշխարհի ոյժերն են գերակալ ոյժերը և եթէ ոչ ըստ ամենայնի մեր ժամանակի մարդկութիւնը համակերպել է այդ ոյժի օրէնքներին, դոնէ աշխատում, ձգտում է համակերպել նրանց: Զգտումը այժմ զէպի մաքի աշխարհի, հոգու աշխարհի աղնուայումն, ընդլայնումն է: մի աշխարհի,

ուր որ երջանկութեան, կեանքի, նպատակի, մարդու գոյութեան հարցի բուն աղբիւրներն են թաղանթաւ:

Ինչպէս կուլտուրան նիւթական հիմքերը շատ երկար ժամանակի ընթացքում կարողացաւ հոգեկան հիմքերով փոխարինել, նայնպէս և միտքը իր ուժեղացումը, իր իշխանութեան հզօրանալը դարերի ընթացքում միայն կարողացաւ ձեռք բերել:

Իժուարին, ծանր ու վշտերի, անասելի ցաւերի հետ է կապուած մտքի ծնունդը: Նրա յղացման ժամանակը ոչ ժամանակով և ոչ տեղով հնարաւոր է որոշել և նրա երկնելու գարմանակի բուսէն յաճախ միայն անակնկալ է ու ու յանկարծակի ոչ միայն դրսի հանդիսականների, այլև իրեն՝ երկնողի համար: Ի զուր չէ, որ մեծ մտքեր երկնողները իրենց մեծ մտքի ծնունդը մի տեսակ լուսաւորում, մի տեսակ յայտնութիւն են համարում, որովհետև այդ խորհրդաւոր բուսէն կարգից դուրս պայմաններ է ստեղծում երկնողի հոգու աշխարհում: Ճշմարիտ է, մեր իրական ուղղութեան երկրպագու ժամանակում հրաշքին հաւատալը անմտութիւն կը լինի և այդօրինակ երկնողները միայն անդարդացած շրջանի մարդկանց համար է ընդունելի: Սակայն երբ խնդրին նայում ենք հոգեբանական տեսակէտից և մեծ մտքի ծննդեան պայմանները, պատճառներն ենք ուզում մանրամասն, դիտական վերլուծութեան ենթարկել, վերջ ի վերջոյ հանդիպում ենք մի այնպիսի կէտի, ուր որ գիտութիւնը իր սկարութիւնն է խոտտովանում և բաւականանում է արձանագրելով միայն եզրած փաստը, առանց նրա էութիւնը պարզաբանել կարողանալու:

Բանականութեան ոյժի գարմանալիութիւնը հէնց այն է, որ նա իրենից ծնուած, իրեն արգասիք եղող երկնող ինքը բացատրել չի կարողանում: Մեծ հանճարը, ստղանդը ինքն անկարող է բացատրել իր արած գիտի ծագումն ու նկարագրել նրա ինչպէս լինելը: Մեծ մասամբ այդ դէպքում նրանք ասում են՝ բնութագր լուսաւորուեց կամ գայտնութիւն եղաւ, որին սովորական մարդիկ հրաշք են ասում: Եւ չպէտք է մի բուսէ անգամ կասկածել, որ իրօք մեծ մտքի ծնունդը իր մանրամասնութիւններով, իր ծագման ու գարգացման ընթացքով կատարելապէս պարզ չէ լինում հէնց իրեն՝ գիււա անողի համար:

Հօգու գաղանարանում կատարուող գարմանալի գործողութիւնները օրէնքի ու բացատրութեան չենթարկուող ճանապարհներով են կատարուում և էլ աւելի առեղծուածային ձևով միանում, մի գեղեցիկ ամբողջութիւն կազմում, մի հիանալի ներդաշնակութիւն ստեղծում: Պատմաբանը կամ հոգեբանը կարող են առաջ բերել զանազան փաստեր վերաբերող բնութագրերին, ժամանակի ոգուն ու պահանջներին և կամ անհատի առանձնայատկութիւններին, սակայն այդ բոլորը կը լինեն միայն օժանդակ միջոցներ լաւ, մանրամասն հասկանալու թէ ինչ եղաւ, ինչ պայմաններում, իսկ թէ ինչպէս եղաւ ծնունդը, ինչ ոյժերից կազմակերպուեց այն, այդ միշտ էլ կը մնայ անորոշ՝ ճիշտ այնպէս, ինչպէս հոգեբանու-

թեան մէջ ներարգրում է միայն թէ մատճողութիւնը ինչ գրգիռներէից, նիւարդերից է օգուում, ինչ է ստանում դրսի աշխարհից, բայց այդ դեռ բաւական չի համարում բացատրելու, թէ ինչպէս դրսի նիւթական կամ ֆիզիքական երկնողը մարմնի մէջ բնախօսական երկնողի է կերպարանափոխում և մանաւանդ ինչպէս վերջինս բնախօսականից հոգեկանի է վերածուում: Այն, ֆիզիքական բնախօսութիւնը նկատուում են լոյսը, սեռայութիւնը, թէ ինչ է լոյսը, ինքը աչքը ինչ կազմութիւն ունի և լոյսը երբ ընկնում է առողջ աչքի վրայ, ինչ է առաջ գալիս, սակայն և ոչ ոք ցայսօր չի կարողացել բացատրել թէ ինչպէս է եթերի ստատանումը միտք-դաշախար, տպաւորութիւն դառնում, ինչպէս է գրգիռը մտքի վերածուում: Ահա այն գորղեան հանգոյցը, որը ոչ մի սրով, անգամ Մակեդոնացու ամեն ինչ կարող սրով, չի լուծում և այս անհասկանալիութիւնը ստեղծում է ու առաջ է բերում հրաշալիքի, գարմանքի ու հիացմունքի արամագրութիւն մարդկանց մէջ:

Այս պայմաններն ի նկատի ունենալով ահա այնքան էլ անմիտ ու անհասկանալի չպէտք է համարել մեծ մտքի ծննդեան բուսէն հրաշալիքով պատելու հանգամանքը: Մանաւանդ որ այդ երկնողը ոչ թէ աղգային, ցեղական բնաւորութիւն ունի, ոչ թէ յատկապէս մի ոտտայի է յատուկ, այլ առհասարակ բոլոր առաստաններին և ունի համամարդկային բնոյթ, բոլոր ժամանակների և բոլոր տեղերի մեծ մարդկանց մեծ ծնունդները այդօրինակ գարմանալի բուսէների նկարագրութեամբ է զարգարում:

Միտքը շատ ծնունդներ չի ունենում, ինչպէս ճիւթը բայց և այդ քիչ ծնունդների մէջ կան առանձնայատուկ ծնունդներ, որոնք առաւել ևս ուշագրաւ ու գրաւիչ են իրենց բովանդակութեամբ, գեղեցկութեամբ:

Կրի ծնունդը այդ կողմից իրօք առանձնայատուկ ծնունդ է և նրա ոյժը հրաշայի լինելու յատկութիւնն ունի: Առասպելական հերոսների նման հայրը որդուց սկար է լինում և որդին չօրը յաղթում է, մտքի ծնունդ գիրը իր ուժով գերակշռում է իր ծնողին և նրա համար սնունդ մատակարարելով ուսնացնում, անցնում է նրան մինչ անհաւատալիութեան աստիճանը: Կրի մատակարարած ոյժը այնքան հզօր է, որ ոչ մի այլ ոյժ նրան չի կարողանում դիմագրաւել և նրա ստեղծագործութիւնները հիացմունքների շղթաներ են կազմում:

Մտքից առնելով իր սնունդը գիրը այնպիսի գարմանալի միացումներ, ներդաշնակութիւններ և կերատուածներ է առաջ բերում երբեմն, որ յաճախ ինքը գրքով իր ոյժը արտադրող միտքը անկարող է լինում այդ հրաշալիքը հասկանալու: Քիչ չեն դրով արտայայտուած այնպիսի մտքեր, որոնք երկար խորհրդածութիւնների, սրտամաշ մտատանջութիւնների պատճառ են դառնում: Գուցաւ մեծ իմաստունը, յայտնի է, որ Անյայտ Աստուծոյ տաճարի արձանագրութիւն «Ծանիր գրեզ»-ի առաջ օրերով կանգնում ու մտածում էր և կրկնում օր ու գի-

չիբ, լարում իր բոլոր ոյժերը այդ մտքի ծնունդը մտքով լուծելու:

Գրին յանձնուած, նշանով արտայայտուած մտքի ծնունդը առաւել ևս ուժեղ է գառնում նրանով, որ բանաւոր միտքը թուլանում է, կորցնում է իր սկզբնական ոյժը, որովհետև մարդու յիշողութիւնն էլ վերջ ունի և ժամանակի ընթացքում նսեմանում է, մինչդեռ գրին յանձնած միտքը իր ոյժը պահում է շարունակ, քուցէ սխալ չի լինի, եթէ ասեմ՝ նոյնիսկ յաւիտեանս, այն չափով, որչափով մարդկութիւնը ինքը յաւիտեանական կարող է համարուել: Գրի միջոցով միտքը բացի այդ յաւիտեանական ոյժ գառնալը, շատերի համար է գործադրում, բերանացի արտայայտած միտքը ունի որոշ շրջան, այն է՝ անմիջապէս լսողներից կազմուածների շրջան, մինչդեռ գիրը լսող չի պահանջում և նրա շրջանը աստի, խօսողի տեղով չի օտոմանափակուած, այլ նրա շրջանը մարդկութիւնն ինքն է: Գիրը իր էութեամբ չունի տեղ ու ժամանակ և նա տարածուած է օր աւուր աւելի լայն չափերով, աւելի լայն սահմաններով, որով հետև այդ է նրա էութիւնը:

Մրանով էլ դեռ չի վերջանում նրա բովանդակութեան էութիւնը, մտքի ծնունդ լինելով ու մտքից սնունդ առնելով, ինքը գիրն էլ միայն մտքին է սնունդ մատակարարում ու ստեղծագործութեան նորանոր ոյժեր առաջ բերում: Անվերջ, անհատուած է այդպիսով նրա արտադրական կարողութիւնը և անաչառ աղբիւր է մտքի աշխարհի համար: Գիրն է այդպիսով յառաջադիմութեան ուղու ներդաշնակ միջոցը, որովհետև նրա նման բազմազան ու անվերջ է, նրա նման անապառ ու անձայր է:

Գիրը միտժամանակ նաև մեռած ոյժ չէ, ինչպէս ասում են երբեմն, այլ կենդանի, միշտ թարմ, միշտ նորութիւն ստեղծող, միշտ գիւտեր, նոր բացումներ առաջ բերող: Գրի ոյժը շատ անգամ է պատմութեան մէջ հղորների, իշխանութիւն ունեցողների դայրոյժը շարժել և պողտաար իր բոլոր ձևերով ու ոյժերով հանդէս է եկել այդ առասպելական հերոսի յաղթական գնացքը դադարեցնելու, նրա ուղին կտրելու: Բայց օրհասական վայնասուններ բարձրացնելով առժամանակեայ երևոյթական լուռութիւնը յաղթութիւն համարելով վերջ ի վերջոյ տեղի է տուել այդ ոյժին, որովհետև նրա թը անկարող է մտքի ոյժին յաղթել, ինչպէս էլ ուզում է լինի:

Մտքի մեծ ծնունդներ արտադրողները խաչի, խարոյկի, խարազանի շքանշաններով են դարգարել իրենց մարմինը, սակայն դրանց մտքի աշխարհում ոչ մի նիւթ, ոչ մի արտաքին ոյժ չի կարողացել մուտք գործել և իշխել և վերջ ի վերջոյ խաչեցեալը յաղթել է, խարոյկ բարձրացողը իր մտքի ծնունդով է տիրել մարդկանց և վերածնութեան նոր աշխարհ բացել:

Չարմանալի չէ ուրեմն, որ ազգերի, ժողովուրդների գոյութեան ապահովութեան, յառաջադիմութեան ուղին բռնելու հաստատուն միջոցի ընտրութեան համար

ամենից լաւը, ամենից վստահելին գիրն է համարուել և համարում է: Ո՛րքան ազգեր դադարել են շնչելուց իրենց թօքերով, տեսնելուց իրենց աչքերով, սակայն հազարաւոր տարիներ անցնելուց ի վեր էլ դեռ նրանք ապրում են մեզ համար և կապրեն մեր յետնորդների համար ևս, որովհետև գրին են յանձնել իրենց մտքի և հոգու աշխարհի արտադրութիւնները, որովհետև հոգու աշխարհի ծնունդներ են թողել նշաններով, սրբազան գրերով արտայայտած թէկուզ և ժայսերի վրայ:

Նայ ժողովուրդն էլ ունեցել է իր մեծ մտքեր ծնողները և դրանց մէջ ուշադրաւ Օշականի կիկղեցում համեռ գամբարանի մէջ իր նիւթականը ամփոփող, հոգեպէս սակայն ապրող խնկելի Մաշտոց ս. Մեսրոպն է: Գրերի ծնող, գրքերով հայի միտքը պարարտացնող ու գրով հայի գոյութիւնը ապահուող այդ մեծ մարդը ևս իր այդ մեծ գործի ծնողեան լուրջն հոգեբանօրէն հասկանալի պատճառով հրաշալիքով է պատել: Այլ ինչ գորմանք, եթէ այդ ծնունդը հրաշալիք համարէին իր ժամանակակիցները, երբ շնորհիւ այդ գարմանալի ոյժի քաղաքականապէս անտէր մնացած հայ ժողովուրդը ի մի ձուլուց, միացաւ մի անքակտելի կապով ու սպէտք զիտուեացաւ, անհասկացողը հասկացաւ:

Անգամ այժմ ևս, երբ ամենուրեք հայ մարդը սրբուհական գործի կպած ուզում է հնար կղաժի չափ վայելուչ ձևով տօնել այդ տօնը, չխնայել իր սրտի ու մտքի լաւագոյն արգասիքը, այդ ծնունդի՝ գրի գարմանալի ոյժ լինելն է երևան դալի: Էլէքտրական հոսանքով շղթայում է այդ ոյժը աշխարհիս ամեն անկիւններում ցրուած, հայրենի օջախից հայտնուած հայերին և մի սիրտ, մի հոգի տալիս նրանց, մի նպատակի ուղղում:

Գրի ոյժն է դարձել այժմ մեր յառաջադիմութեան ուղին արագ ու լաւ կտրելու միակ միջոցը և այդ մտքի ծնունդը միշտ էլ մեր գործվիդն է կղել ապրելու, գործելու ինքնուրոյն, առանց աջ ու անհակ խտտորուելու: Այդ նոյն ոյժն է, որ այժմ առաւել ևս նորանոր հրաշալի ծնունդների գուռն է բանալու մեզ համար, որ լուսաւորելու է մեր անցնելիք ուղին և իւրաքանչիւր հայ մարդ պէտք է վստահ, առանց բայէ անգամ կասկածելու իր հայեացքը գրին ուղղէ և հուսատայ, որ այդ անխորտակելի, անվերջ ոյժը նրան կը տանի դէպի բազմադարութիւն, դէպի հոգու աշխարհի առաւել զարգացումն ու երջանկացումը:

Որքան հայր սիրէ այդ հրաշալի ծնունդին, այնքան աւելի կապանովէ նա իր գոյութիւնը, այնքան աւելի կը թնթկացնէ իր գնալիք ուղին: Գիրը ստեղծագործող ոյժ է, իսկ ով գուրկ է ստեղծագործող ոյժից, նա իր գոյութիւնը իսկապէս պէտք է դադարած համարէ:

Մտքի մեծ ծնունդի յօրէիսանին թույլ ամեն մի հայ ստեղծագործող մեծ ոյժով—գրով դարգարէ իր միտքը և այն ժամանակ միայն տօնը իր նպատակին ծառայած կը լինի: